ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
sargsyansuren@yandex.ru

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ
(ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր՝ Բեռլինի վեհաժողով, հոբելյան, ազտագրական ծրագրեր, մեծ դաստիարակ, զինված պայքար, հեղափոխական գործունեություն, լուսավորիչ:

Ներածություն

Այս տարի լրացավ ազգային գործիչ և նշանավոր հոգևորական, հայ ժողովրդի կրթության, մշակույթի և ազգային-ազատագրական գաղափարախոսության երախտավոր Մկրտիչ Խրիմյանի 200-ամյա հոբելյանը: Երախտապարտ հայ ժողովուրդը, որ միշտ բարձր է գնահատել Մ. Խրիմյանի ազգաշահ գործունեությունը, անկասկած մեծ շուքով նշելու էր այդ հոբելյանը, սակայն սկզբում թագավարակը, հետո էլ մեր սրբազան գոյամարտը հնարավորություն չտվեցին պատշաճ մակարդակով դա անելու: Պատերազմի դաշտում մեր անմեղ, դեռ անբեղ ու անմորուք նահատակների անդառնալի կորստի ցավը ճնշում է, խեղդում... Բայց հայ ժողովուրդն այսպիսի փորձությունների միջով էլի է անցել և վստահ եմ, սա էլ կհաղթահարի: Մեր հաղթանակն անխուսափելի է, քանի որ դրա աղբյուրը մեր հոգեբանական գերազանցությունն

* *Հոդվածը ներկայացվել է 09.09.20, գրախոսվել է 26.09.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

է մեր բոլոր թշնամիների նկատմամբ: Հայ ժողովուրդը պայքարում է իր տունն ու հայրենին պաշտպանելու և խաղաղ-ստեղծագործ աշխատանքով արարելու-ապրելու համար: Մեր գործն արդար է: Կարևոր է նաև, որ ամենադժվարին պահերին անգամ չենք դադարի ստեղծագործել, երբեք աչքաթող չենք արել մեր մեծերին, հիշել ենք նրանց ու նրանց թողած պատգամները, հետևել նրանց խորհուրդներին, սերտել նրանց դասերը:

Յուրաքանչյուր պատմական փուլում որևէ անհատ կարևոր դերակատարություն է ունեցել, որի համար էլ երբեմն այն անվանվել է այդ գործչի անունով: Այդպիսի գործիչ էր նաև Մկրտիչ Խրիմյանը: Այնպես որ, առնվազն XIX դարի վերջին քառորդը հանգիստ խղճով կարող ենք բնորոշել որպես **Խրիմյանի ժամանակը**: Գործիչ, որը պետականության չգոյության դժվարին պայմաններում, կարողացավ մեկտեղել հոգևորականի սքեմը ազգային-ազատագրական պայքարի կազմակերպչի ու ղեկավարի պատվաբեր առաքելությունը, իր խոսքով և գործերով հավատակիցների հետ միասին կարողացավ դարավոր ընդարմացումից դուրս բերել հայ ժողովրդին և սերունդներին փոխանցեց սեփական հայրենիքում ազատ, անկախ ու մարդավայել ապրելու օրվա պահանջ վեհ գաղափարը: Նրա շատ տեսակետներ այսօր էլ արդիական են ու քննություն են բռնում նաև այս ծանր օրերին: Այնպես որ կարող ենք արձանագրել՝ նա նաև մեր ժամանակների հայրիկն է:

Իբրև հոգեմտավոր և ազգային-քաղաքական մեծագործ հեղինակություն, հայոց հազարամյակների պատմության ոսկեմատյանում, անկասկած իր վեհաշուք տեղն ունի հայ ժողովրդի ամենաալեծուփ ժամանակաշրջանում հայրենի հողի ու դրա աշխատավորի մեծագույն խորհուրդն ու արժեքը լավագույնս գիտակցած ու դրա համար իր ողջ կյանքը նվիրաբերած Մկրտիչ Խրիմյանը: Մարդ, որն իր հոգևոր ծառայությամբ, իր գրական ստեղծագործություններով, իր հրապարակագրական վաստակով, իր բանավոր քարոզներով և ազգային, քաղաքական ու հասարակական եռանդուն գործունեությամբ՝ ավելի քան վեց տասնամյակ առաջնորդող ներկայություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: **Եղավ հայոց մեծ դաստիարակը**, որ իր վարակիչ օրինակով խորհրդանշեց ազգի ու հայրենիքի նկատմամբ անսակարկ անձնվիրումը, հայոց ազգային ու տոհմիկ արժեքների անխաթար պահպանումը, հայ եկեղեցին և հայ միտքը դարավոր գերության հետևանք ուծացումից ու այլասերումից ձերբազատելու և նորոգ թափով լուսավորելու աննկուն պայքարը:

Մ. Խրիմյանի հասարակական, կրոնական ու ազգային գործունեությանը հայ ընթերցողն հիմնականում ծանոթ է: Մեզ են հասել զգալի թվով **արխիվա-**

յին վավերագրեր, որոնք պահվում են Հայաստանի Ազգային արխիվում[1]: Այստեղ մեծ թվով վավերագրեր կան հատկապես Մ. Խրիմյանի կաթողիկոսական գործունեության մասին: Դրանք Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, Շեյխ-ուլ-իսլամին, Ռուսաստանի տարբեր նախարարներին ու բարձրաստիճան այլ պաշտոնյաներին, պարսից շահին և տարբեր գործիչներին հասցեագրված անձնական բնույթի և պաշտոնական վավերագրեր են: Պակաս կարևոր չեն նաև Մ. Խրիմյանին վերջիններիս կողմից հասցեագրված նամակներն ու տարաբնույթ գրությունները: Խրիմյանի ֆոնդ կա նաև Մատենադարանում, որտեղ պահվում են օգնություն ստանալու հույսով Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանին ուղղված արևմտահայ գաղթականների նամակները: Խրիմյանի մասին արխիվային փաստաթղթեր կան նաև Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմա-պատմական[2] և այլ արխիվներում: Առանձնակի կարևորություն է ներկայացնում հատկապես Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի **(ԳԱԹ)** արխիվը, որտեղ Մ. Խրիմյանի ֆոնդում պահվում են Մ. Խրիմյանի բազմաթիվ նամակները՝ ուղղված տարբեր տեղերում բնակվող հայ և օտար գործիչներին: Միայն Գ. Սրվանձտյանցի ֆոնդում պահվում են Խրիմյանի ձեռքով գրված 269 նամակ:

Կարևոր են և հաճախ սկզբնաղբյուրի նշանակություն ունեն նաև **փաստաթղթերի ժողովածուները**: **Առանձնանում են հատկապես Գյուտ քահանա Աղանյանցի** «Դիվան հայոց պատմության» 13-րդ հատորը[3], Մ. Խրիմյանի մահվան հիսնամյակին Բոստոնում հրատարակված «Ամենայն Հայոց Հայրիկ» ժողովածուն[4], մի քանի հատորներով լույս տեսած «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ»[5] և այլն: Անփոխարինելի աղբյուր են նաև «Արծուի Վասպուրական» ամսագրում տեղ գտած **Խրիմյանի գրչին պատկանող նյութե-**

---

[1] ՀԱԱ, ֆ. 56, ֆ. 57:

[2] Государственный Военно-исторический архив (ЦГВИА), ф. 50 (Турция).

[3] Դիւան Հայոց պատմութեան 1915:

[4] Ամենայն Հայոց Հայրիկ 1957:

[5] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ (1860–1870 թթ.) Կ.Պոլիս, տպ. Սարեան, 1890, 435 էջ, (1870–1874 թթ.), Կ.Պոլիս, 1870, 1016 էջ, (1874–1876 թթ.), Կ.Պոլիս, տպ. Յ.Միւհէնտիսեան 1874, 535 էջ, (1876–1877 թթ.), Կ.Պոլիս, 1876, 518 էջ, (1878–1880 թթ.), Կ.Պոլիս, 1878, 518 էջ, (1880–1881 թթ.), Կ.Պոլիս, տպագրություն Արամեան, 1880, 610 էջ, (1881–1883 թթ.), Կ.Պոլիս, 1881, 409 էջ, (1883–1884 թթ.), Կ.Պոլիս, 1883, 612 էջ, (1884–1886 թթ.), Կ.Պոլիս, 1884, 479 էջ, (1886–1888 թթ.), Կ.Պոլիս, 1886, 316 էջ, (1888–1890 թթ.), Կ.Պոլիս, 1888, 344 էջ, (1890–1896 թթ.), Կ.Պոլիս, 1890, 152 էջ:

ը[6], **որոնք** պարունակում էին վիճակագրական տեղեկություններ[7], և վերջապես նրա թողած հարուստ գրական-գեղարվեստական և ծրագրային հրապարակախոսական ստեղծագործությունները: Սկզբնաղբյուրներից առաջնային են Մ. Խրիմյանի հրապարակախոսական և գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք սփռված են իր խմբագրած «Արծուի Վասպուրական»[8] ամսագրում:

Մ. Խրիմյանն իր հայրենանվեր գործունեության համար անսահման ժողովրդականություն է վայելել և այն քիչ գործիչներից է, որ կենդանության օրոք արդեն մեծարվել է ժամանակակիցների կողմից: Հետագայում ևս շատ գործիչներ ու հետազոտողներ հուշեր են թողել և ուսումնասիրություններ հեղինակել նրա կյանքի ու գործունեության մասին: Հետաքրքիր **հուշեր** են թողել Ե. Տևկանցը[9], Հ. Երամյանը[10] Ա. Թերզիպաշյանը[11], Ռ. Խանազատը[12], Ե. Տեր-Մկրտչյանը[13], Ս. Փափազյանը[14], Յ. Նշկյանը[15] և ուրիշներ:

Անհամեմատ մեծ թիվ են կազմում Մ. Խրիմյանի կյանքին ու գործունեությանը նվիրված **ուսումնասիրությունները**[16]: Հայ և օտար հեղինակները մեծաթիվ էջեր են նվիրել և ներկայացրել Մ. Խրիմյանի գործունեության այս կամ այն ուղղությունը: Դրանք կարելի է խմբավորել՝ ա) ազգային-ազատագրական պայքարին, բ) եկեղեցական գործունեությանը և գ) գրական ժառանգությանը նվիրված երկեր: Առաջիններից մեկը Խրիմյանի մասին գրեց **Ծերենցը՝** «Կաթողիկոսություն և Խրիմյան» երկում փորձելով ներկայացնել

---

[6] «Արծուի Վասպուրական» ամսագրում պարբերաբար տպագրվում էին հոդվածներ, որոնք նաև վիճակագրական տեղեկություններ էին պարունակում:

[7] Հայոց պատմություն 2010, 406:

[8] «Արծուի Վասպուրական» ամսագիր, 1855–1864 թթ.: Մ. Խրիմյանը Կ. Պոլսում հիմնած իր տպարանում 1855–1856 թթ. «Արծուի Վասպուրական» ամսագրի մի քանի համար հրատարակելուց հետո, տպարանի պարագաներով վերադառնում է Վան, ուր Վարագավանքին կից 1858 թ. հիմնում է համեստ մի տպարան, որտեղ և շարունակում է հրատարակել վերը նշված պարբերականը:

[9] **Տևկանց** 4180:

[10] **Երամեան** 1929:

[11] **Թէրզիպաշեան** 1938:

[12] **Խան-Ազատ** 1908:

[13] **Տէր-Մկրտչեան** 1966:

[14] **Անանիա**, 1906, թիվ 10–11:

[15] **Նշկեան** 1884:

[16] Հոդվածն ավելորդ ծանրաբեռնումից խուսափելու մտահոգությամբ՝ (դրանք մեծաքանակ էջեր կզբաղեցնեին) ձեռնպահ ենք մնում բոլոր աշխատությունները, դրանց հրատարակության տեղն ու թվականը նշելուց:

Խրիմյան երևույթը հայության կյանքում: Մյուսը **Հ. Առաքելյանն** էր, որը Խրիմյանին որակեց որպես համազգային և ապագա կերտող գործիչ: Խրիմյանի գործունեության առաջին գիտական գնահատականը տրվեց **Մ. Վարանդյանի** կողմից, ով նրան համարեց ազատագրական պայքարի գլխավոր կազմակերպիչ: Ծավալուն և խորքային անդրադարձ կա **Սարուխան**ի, զգուշավոր և զուսպ, բայց ամփոփ գնահատական տված **Մ. Օրմանյանի**, Խրիմյանի՝ որպես ազգային-ազատագրական գաղափարի ստեղծող-ներկայացնող **Գ. Գյուզալյանի**, հայ-քրդական հիմնախնդիրը ճիշտ պատկերացնողի՝ **Կ. Սասունու**, որպես դաստիարակի՝ **Վազգեն** Վեհափառի և այլոց երկերում: Խրիմյանի գործունեությունը լուսաբանող բազմատեսակ մոտեցումներով են գրված **Հ. Աճեմյանի, Ա. Չոպանյանի, Ա. Ալպոյաճյանի, Լ. Չորմիսյանի,** ինչպես նաև տասնյակից ավելի **ռուսալեզու** և նույնիսկ **թուրքալեզու աշխատությունները**: Չնայած գաղափարախոսական սահմանափակումներին, Խրիմյանի գործունեությանն անդրադարձել են նաև ԽՍՀՄ տարիներին՝ **Լեոն, Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, Դ. Մուրադյանը, Ռ. Հովհաննիսյանը, Հ. Ղազարյանը, Վ, Երկանյանը, Ծ. Աղայանը, Մ. Մխիթարյանը, Վ. Բարխուդարյանը** և շատ ուրիշներ:

Ամենայն բարեխճությամբ իրականացնելով Ա. Չոպանյանի «Խրիմեանի կեանքն ու տիպարը ստուար հատորի մը նիւթ կրնան կազմել, և այդ հատորը օր մը պիտի գրուի անշուշտ և պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզական դեմքին բոլոր գիծերը,- և թերութիւննե՛րն ալ» պատգամը[17]՝ Մ. Խրիմյանի կյանքին և հասարակական-քաղաքական գործունեությանը նվիրված ամբողջական ուսումնասիրություն է հեղինակել **Էմմա Կոստանդյանը**[18]: Ժողովրդական գործչի կյանքն ու գործունեությունն ամբողջական ներկայացնելու, մի շարք վիճելի հարցերին հիմնավոր և սպառիչ պատասխանելու առումով Է. Կոստանդյանի փաստահարուստ և ամփոփ ուսումնասիրությունը շահեկանորեն տարբերվում է իր նախորդներից և լուրջ ներդրում է խրիմյանագիտության ասպարեզում:

«Ազատութեան ջահակիրն» ու «Երկաթե շերեփի» քարոզիչը

Սիամանթոյի բնորոշմամբ՝ «Ազատութեան ջահակիր» Մ. Խրիմյանը հայ իրականությունը հեղաշրջեց երկու հիմնական ուղղություններով՝

---

[17] **Չոպանեան** 1907:

[18] **Կոստանդյան** 2008:

ա) հայ մարդու միտքն ու հոգին սևեռեց դեպի բոլորից լքված և բռնակալներին ոտնակոխ հայկական գավառները, դեպի անհուն վշտով ու անսահման բարությամբ տոգորված հայ գեղջուկը, դեպի բոլորի կողմից մոռացված Հայաստան աշխարհը:

բ) «Հէրիսայի» եւ «Թուղթէ շէրեփի» իր պատմական քարոզով Խրիմյանը նոր դարաշրջան բացեց հայ ժողովրդի առջև: Հունավորեց Հայաստանը ոչ միայն իբրև հոգեմտավոր տարածք, այլև, ու առաջին հերթին իբրև աշխարհաքաղաքական իրականություն վերականգնելու ճամփա: 1878 թ. օգոստոսին, Բեռլինի տխրահռչակ վեհաժողովից, որտեղ Թուրքիայի կողմից խոստացված հայկական գավառների բարեկարգումների հարցը զոհ գնաց մեծ տերությունների քաղաքական հաշիվներին, հիասթափված, ձեռնունայն ու վշտացած վերադառնալով՝ վառեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարական խարույկը: Նրա պատմակերտ «Երկաթե շերեփի» քարոզից շունչ ու թափ առավ «Միայն զէնքով կայ հայոց փրկութիւն» պատգամող մեծագույն իմաստությունը, որն այսօր էլ արդիական է:

Առհասարակ Խրիմյան Հայրիկի համոզմամբ միամտություն է ուրիշների հետ հույսեր կապելը: Դա հավասար է ինքնասպանության: «Այն ազգ և աշխարհ, որ Հայ չէ, մեզ հետ չի լար, այլ մեզ չի պէտք օտարին լաց,- ասել է նա մի առիթով,- բաւական է, որ թէ՛ տարաշխարհիկ գաղթական հայեր, եւ թէ՛ Բյուզանդիոնի պանդուխտ հայեր յիշէն մեր հայրենյաց չարչարեալ որդիքներ եւ լան: Ես գիտեմ, եւ դու գիտես, թէ սոսկ լալով ու ողբով եթէ շաղախենք մեր հայրենեաց հող՝ հայրենիք չշինվիր»[19]: Նա անհրաժեշտ է համարում ժողովրդի մեջ վառ պահել հավատը, հորդորում է չհուսահատվել, սպասելով, որ «օր մի եւս Երկինք այդ կենդանարար ցող Հայոց դաշտերուն վերայ կը ցողէ, դու կտեսնես թէ ինչպէս Հայոց աշխարհն եւս կը վերածնի հրաշիւք: Միայն թէ մեք աննկուն արիութեամբ գործենք, եւ Աստուած կօգնէ»[20]:

Մկրտիչ Խրիմյանի ամբողջ կյանքը ճշմարտության և արդարության փնտրտուք եղավ: Նա, բառի ամենաընդգրկուն և խորը իմաստով՝ **լուսավորիչ էր,** ազնիվ և ժողովրդի հանդեպ ունեցած սիրո մեջ էր փնտրում իր փառքը: Ստեղծագործական ու պայքարի բովում ապրեց իրեն շնորհված ամբողջ կյանքը և, ինչպես սիրված ժողովրդական երգում է ասվում՝ «ծերացաւ՝ Ազգին համար խորհելով»:

---

[19] **Խրիմեան Հայրիկ** 1992, 107:

[20] **Խրիմեան Հայրիկ** 1992, 107:

Ազգաշահ գործի մարտիկը նվիրումի ձիգ ու քարքարոտ ճանապարհին մշտապես առաջնորդվել է մի սևեռուն գաղափարով, **ազատագրել Հայաստանը բռնատիրության ճիրաններից,** աշխարհով մեկ սփռված **հայերին հավաքել հայրենիքում**, հոգևոր ու նյութական բոլոր ուժերը կենտրոնացնել երկրում և ստեղծել այնպիսի պայմաններ, որ **այլևս հայը չհեռանա** իր դրախտանման ոստանից: Նրան տանջում էր այն պարագան, որ գեղջուկը հարկադրված թողնում էր իր սրբազան հողը ու գնում բախտ որոնելու օտար երկինքների տակ: **Գաղթավայրերը** Խրիմյանի կարծիքով որքան էլ բարգավաճ ու խոստումնալից, պանդուխտ հայի համար **դրախտավայր չէին կարող լինել**: Նրա համար բոլոր դժվարին հարցերի պատասխանն ու ելակետը բուն հայրենիքն էր, երկիրը, իսկ **գաղթավայրերի խնդիրը ածանցյալ էր հայրենիքին:** Այս մոտեցումները ևս ավելի քան **արդիական են ու ճշմարիտ**:

Հայրենիքին անմնացորդ նվիրյալի կյանքում առանձնահատուկ տեղ էր գրավում ազգային ինքնագիտակցության և զարթոնքի շրջանում առաջադեմ մտավորականների հետ ազգային-ազատագրական գաղափարախոսության բյուրեղացման ու դրանք կյանքի կոչելու գործին ամենաակտիվ մասնակցությունը: Հատկապես Վասպուրական աշխարհում գործելու տարիներին Մ. Խրիմյանի խորհուրդներով, իսկ երբեմն էլ անմիջական մասնակցությամբ տարբեր, երբեմն շատ «անմեղ» անուններով հիմնադրվում էին ազատագրական խմբակներ («Խնամատար», «Երկրագործական միություն» և այլն), որոնք բոլորն էլ նպատակ ունեին համախմբել ու ազատագրական պայքարի դուրս բերել արևմտահայությանը: Փաստերը վկայում են, որ նրա անմիջական խորհրդով և օժանդակությամբ էին գործում Արևմտյան Հայաստանում ստեղծված գաղտնի խմբակներն ու կազմակերպությունները՝ Վանի «Սև խաչը», Կարինի «Պաշտպան հայրենյացը», Եվդոկիայի, Մարզվանի, Փոքր Հայքի բազմաթիվ ընկերությունները[21]:

Իրատես Խրիմյանի համար ելակետային էին «զորք ու զորապետներ պատրաստելը և միայն պատեհ ժամանակին» պայքարի դուրս գալը[22]: XIX դարի 80-ական թթ. ազատագրական գաղափարախոսության ռահվիրաներից Մկրտիչ Փորթուգալյանի հետ Մ. Խրիմյանը գաղափարական սերմնացանը, խորհրդատուն և կնքահայրը եղավ 1885 թ. Վանում հիմնադրված հայ իրականության մեջ առաջին և միակ երկրածին Արմենական կուսակցութ-

[21] **Գիւզալեան** 1954, 65:

[22] **Կոստանդյան** 2005:

յան[23]: Մի ամբողջ սերունդ հայ ազգային-ազատագրական պայքարի աննկուն մարտիկ, 1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության ռազմական ղեկավար Արմենակ Եկարյանի և Արմենական-Ռամկավար տեսաբան-պատմագիր Արտակ Դարբինյանի վկայությամբ «մեծացաւ երեք Մկրտիչներուն շունչին տակ»[24]: Դրանք Խրիմյան, Փորթուգալյան և Ավետիսյան-Թերլեմեզյան Մկրտիչներն էին:

Մ. Խրիմյանի կենսագրության գրեթե բոլոր մանրամասները հայտնի են, ուստի չենք անդրադառնա դրանց: Խելացի և ուշիմ պատանին շուտ է որբացել հորից և նրա դաստիարակությամբ զբաղվել է Խաչատուր հորեղբայրը: 1842 թ. հաստատվել է Կ. Պոլսում, ամուսնացել է, սակայն կինն ու դուստրը մահացել են և նա 1854 թ. դարձել է կուսակրոն ու ձեռնադրվել է վարդապետ: 1855–1856 թթ. Կ.Պոլսում հրատարակել է «Արծուի Վասպուրական» ամսագիրը: Եղել է Վարագավանքի վանահայրը, իսկ 1863 թ.՝ Տարոնի և Մուշի հոգևոր առաջնորդը, որտեղ հիմնադրում է «Մուշոյ Նոր Ժառանգաւորաց վարժարանը» հրատարակում «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը: Հասարակ մարդկանց ցավ ու հոգսերով տառապող գործիչն ամենուր պայքարում էր հանուն հասարակ մարդկանց շահերի, որի համար ժողովուրդը նրան մեծարեց «Հայրիկ» պատվանունով[25]: Ավելացնենք, որ Խրիմյանը հայ իրականությունում քիչ հանդիպող այն գործիչներից էր, որն ընդունվել, սիրվել ու մեծարվել է արդեն իսկ կենդանության ժամանակ:

Խրիմյան Հայրիկն անսահման ժողովրդականություն էր վայելում ամբողջ հայության շրջանում, որի առհավատչյան եղավ այն, որ երբ 1869 թ. Կ. Պոլսի նոր հայոց պատրիարք ընտրելու անհրաժեշտություն առաջացավ, ժողովրդի միահամուռ պահանջով ընտրվեց Մ. Խրիմյանը: Բայց պատրիարքի պաշտոնում միայն երեք տարի կարողացավ դիմանալ: Ծավալելով լուսավորական լայն գործունեություն՝ Խրիմյանն իր դեմ լարեց խավարամիտ հոգևորականներին, որոնք զանազան զրպարտություններ էին տարածում նրա հասցեին: Պատահական չէր, որ նրա դեմ երկու անգամ մահափորձ կատարվեց, մատնությամբ փակվեց «Արծուիկը» և այլն: Այսպիսի դժվարություններ հաղթահարելու համար գործչին անհրաժեշտ էր անկոտրում կամք, կորով ու հոգեկան վիթխարի լարում, սեփական գործի արդարացիության հստակ գիտակցություն: Չնայած Խրիմյանը լի էր ավյունով, ուներ իրատես ու խորաթափանց հա-

[23] **Սարգսյան** 2009:

[24] **Եկարեան** 1985, 32: **Դարբինեան** 2003, 24:

[25] **Կոստանդյան** 2005, 41:

յացք, խորապես հավատում էր մարդկային բանականության, արդարության հաղթանակին, զերծ էր հոռետեսությունից, սակայն Կ. Պոլսի պահպանողական խավի ու քաղքենի ղեկավարության հասցեին ուղղված նրա սուր քննադատությունները, գավառի հայության վերափոխման ու զարգացման համար նյութական, հոգևոր և իրավական միջոցներ տրամադրելու նրա հետևողական ջանքերը անխուսափելի դարձրին ամիրայական խավի հետ նրա բախումները: Այդպիսի խիստ լարված պայմաններում երեք տարի պաշտոնավարելուց հետո Խրիմյանը ներկայացրեց իր հրաժարականը և ստիպված կրկին վերադարձավ Վան, որտեղ նոր թափով և նորովի շարունակեց կրթական և ստեղծագործական իր գործունեությունը:

1878 թ. Ներսես արք. Վարժապետյանը Բեռլինի վեհաժողովում հայկական գավառների ինքնավարության պահանջ ներկայացնելու առաքելությամբ հայկական պատվիրակության ղեկավար նշանակեց Մ. Խրիմյանին: Վերադառնալով վեհաժողովից, վերջինս պատկերավոր ձևով հետևյալ կերպ ներկայացրեց այն. «Ժողովասրահին մէջ հսկայ կաթսայ մը կար հէրիսայով լեցուն, անոնք որ երկաթէ շէրեփով եկած էին, ստացան իրենց բաժինը, մենք թուղթէ շէրեփով գացած էինք, չկրցանք բան մը վերցնել կաթսայէն»[26]: Այնուհետև համընդհանուր հիասթափության մթնոլորտում, նա դառնացած արձանագրեց, որ անտեղի, իզուր էին հայ ժողովրդի հույսն ու հավատը՝ թե եվրոպական քաղաքակիրթ տերությունները թույլ չեն տա հերթական անգամ ոտնահարելու արդարությունը, որ քաղաքակրթությունն ու մարդասիրությունը ավելի շպար, դիմակ են՝ քողարկելու համար դիվանագետների հոգեկան ամլությունը: Ի վերջո այդ ամենից Հայոց Հայրիկը ամբողջ դեմքով շրջադարձ կատարեց դեպի ազգային-ազատագրական պայքարը ու «յայտարարած է, որ յոյս դնելու չէ օտարներու վրայ, այլ վստահելու է մեր սեփական ոյժին, զինուելու եւ պայքարելու է»[27], այսինքն՝ ի զեն կոչեց ժողովրդին: **Երկաթե շերեփի գաղափարի հեղինակը** միաժամանակ պարզաբանում էր, որ ժամանակակից քաղաքական պայքարը ցույց է տալիս, թե երկաթե շերեփը ևս ամենազորեղ, ամենաազդու կամ մանավանդ միակ միջոցը չէ: Պարզվում է՝ ոչ պակաս

[26] Խրիմեան Հայրիկ (Մկրտիչ, 1820–1907). Հայոց «երկաթէ շերեփ»ին անկրկնելի պատգամաբերը http://archive.azator.gr/index.php/yushatetr/16261-ss-ss-s-1820-1907-ss-lss-sr-ss-ssss:

[27] Խրիմեան Հայրիկ (Մկրտիչ, 1820–1907). Հայոց «երկաթէ շերեփ»ին անկրկնելի պատգամաբերը http://archive.azator.gr/index.php/yushatetr/16261-ss-ss-s-1820-1907-ss-lss-sr-ss-ssss:

նվաճումների կարելի է հասնել, եթե շերեփը ազնիվ մետաղից է: Երկու հարյուր տարի հետո էլ գրեթե ոչինչ չի փոխվել:

Այդ պահից **նրա գործունեության առաջին շրջանին**, որը **կապված էր գլխավորապես Թուրքիայի ավազակապետության հետ**, փոխարինելու եկավ նոր փուլ: Նրա կյանքի **վերջին տարիներն անցան ցարական Ռուսաստանի** իշխանությունների հետ բազմաբնույթ **հարաբերությունների տիրույթում,** քանի որ 1892 թ. մայիսի 5-ին կայացած կաթողիկոսության ընտրություններում հայ ժողովուրդը հերթական անգամ բարձր գնահատելով նրա անմնացորդ ազգանվեր գործունեությունը, միաձայն ընտրեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Նրա կաթողիկոսության շրջանը համընկավ հայ ժողովրդի պատմության ծանր ժամանակահատվածներից մեկին: Այդ շրջանում հայության կյանքը խռովեցին ցարական կառավարության հակամարդկային գործողությունները, սակայն իր խելացի և կենսափորձով հարուստ կաթողիկոսի գլխավորությամբ ու համառ պայքարի շնորհիվ հայ ժողովուրդը դրանից ևս պատվով դուրս եկավ:

Ճշմարտության և արդարության մարտիկ Խրիմյանն իր ժողովրդանվեր ծրագիրն **իրագործելու երեք ճանապարհ** էր ճանաչում՝ **կենդանի և գրավոր խոսք, տպագրություն**: Պատահական չէ, որ Խրիմյանի հայրենանվեր գործելակերպը և գաղափարական նկրտումները հող նախապատրաստեցին հասարակական-գրական այն շարժման համար, որ 90-ական թվականներին հայտնի դարձավ **«գավառական գրականություն»** անվանումով: Շարժումն հաստատում էր այն ճշմարտությունը, որ ազգային մշակույթի ու գրականության կենսատու և հուսալի հենարանը մայր երկիրն է, ուր վաղնջական ժամանակներից իր կենցաղով, ընկերային-տնտեսական հարաբերություններով ապրել է հայ ժողովուրդը, ստեղծել իր նյութական ու հոգևոր արժեքները, ձևավորվել է տոհմային ոգին ու բնավորությունը: Ի հակակշիռ գաղթավայրերում բարգավաճող գրականության, այն պետք է արտացոլի բուն երկրի իրական կյանքը, ժողովրդի բազմատեսակ հոգսերը, առօրյան ու կենցաղը, նվիրական երազանքները և հարազատ գույներով հայրենի բնությունը:

Խրիմյանը **գրել է կրոնաիմաստաբանական** երկեր («Վերջին շաբաթ և Խաչի ճառ), «Մարգարիտ Արքայության երկնից»), հրապարակախոսական-պատմական հոդվածներ («Ժամանակ և խորհուրդ իւր», «Թագաւորաց ժողով», «Ծրագիր բարենորոգմանց») և այլն, բանաստեղծություններ, որ ամփոփված են «Վերջալոյսի ձայներ» ժողովածուի մեջ, «Ողբացող Խորենացին» քերթվածքը և այլն: Սակայն նրա մուտքը գրական ասպարեզ նշանավորվեց

առավելապես «Պապիկ և Թոռնիկ» երկով (1894), որը պարունակում է կենդանի ու վառ պատկերներ Վասպուրականի գյուղական իրականությունից, կենցաղի ու ավանդույթների նկարագրություններ, բնության տեսարաններ, ժողովրդական խոսք ու զրույցներ, փիլիսոփայական իմաստություններ ժամանակի, կյանքի ու աշխարհի մասին: Չնայած արտացոլում էր 60–70-ականների իրականությունը և բովանդակում այդ ժամանակաշրջանի միտումները, «Պապիկ և Թոռնիկը», սակայն, արձագանքում է նաև դարավերջի հրատապ խնդիրներին: Ավելին. իբրև գրական երևույթ, նրա երևան գալը համընկնում էր «գավառական գրականության» զարգացման նոր փուլին, որ նշանավորում էր անցումը դեպի գեղարվեստական գրականություն:

Բացի արդարության և ազատության իդեալները հաստատելուց, հայրենիքի ու ազգի բարօրությունից, Խրիմյանը կարևոր էր համարում նաև **ժողովրդի պատմական ավանդությունները գրի առնելն ու մամուլին ի պահ հանձնելը**: Վառ հայրենասիրական կրքով շնչող նրա երկերը գրված են հայ ժողովրդի երկու հատվածներին հավասարապես հասկանալի ու մոտ լեզվով: 1876 թ. Վանի հրդեհի ու կողոպուտի կապակցությամբ Հայրիկը հեղինակեց «**Վանգոյժը»**, որն ամբողջովին արյունով ու արցունքով գրված քնարերգություն է: Պատկերելով աղետը, նա գիտակցում էր, որ բավական չէ «լալ միայն» հայրենի կորուստները, անհրաժեշտ է գործնական միջոցների դիմել: Նա ողբալով կորուստները, ջերմ ու մտերմիկ խոսքով մխիթարում, հուսադրում էր հայրենակիցներին: Աղետն ավելի մեծացավ ու ծավալվեց, երբ ծագեց ռուս-թուրքական պատերազմը: Խրիմյանը գրեց «**Հայգոյժը»**, ողբաց «վայրագ խուժերուն ձեռքէն Հայոց անտեր ժողովուրդի» կրած տառապանքները: Այս երկուսը բավական եղան հեղինակին «ԺԹ դարի Խորենացի» հռչակելու համար: Թևավոր խոսքերով ու իմաստուն խորհուրդներով հարուստ նրա գրքերը մեծ մասամբ ծրագրային նշանակություն ունեին և խոշոր ազդեցություն են թողել ժամանակի հասարակական մտքի վրա:

Հայ ժողովրդին «Երկաթե շերեփ» պատգամած և դրանով մեր ազգային-ազատագրական պայքարի վեկտորը դեպի ռազմադաշտ թեքած անմոռանալի Հայրիկն իր մահկանացուն կնքեց 1907 թ. նոյեմբերի 10-ին և թաղվեց Էջմիածնի Մայր եկեղեցու բակում: Երախտապարտ հայ ժողովրդի համար նրա գերեզմանը դարձել է ուխտատեղի: Նրա ծննդից 200 տարի հետո էլ «հայոց դարավոր վշտի Նվագող նրա ոգին կսավառնի հայոց երկնակա-

մարին ներքև, հավատք և հույս ներշնչելով մեր ժողովրդին, լուսավոր նոր հորիզոններ բանալով դեպի ապագան»[28]:

Եզրակացություններ

1. Մկրտիչ Խրիմյանը Հայոց պատմության մեջ առանձնացող հոգևորական գործիչ-մտավորական է և **անուրանալի ավանդ ունի** հասարակ ժողովրդի զարգացման գործում: Այն գործիչներից է, որ իրենց ժամանակակիցների աչքում արդեն առանձնանում են հասարակ մահկանացուներից, դառնում խորհրդանիշ, օրինակ, ուղեցույց: Պատահական չէ, որ Սիամանթոյի բնութագրով՝ «գաղափարի և ազատության ջահակրին», **ժամանակակիցները մեծարել են «Հայոց Հայրիկ» պատվանունով**, արվեստագետները գծել են նրա դիմանկարը, բանաստեղծները՝ որպես ճշմարտության անդուլ որոնողի, շարունակ փառաբանել:

2. Հայոց պետականության չգոյության ժամանակներում ժողովուրդն ի դեմս եկեղեցու ու կաթողիկոսների պատկերացրել են պետականության կրողին: 19-րդ դարի երկրորդ կեսի ամենանշանավոր գործիչ **Մ. Խրիմյանը** ևս **ազատության ու անկախ պետականության գաղափարի համոզված կրողն էր** և ամեն ինչ արեց այդ ազատությունը նվաճելու համար:

3. **Նա եղավ** այն տիպարը, ի դեմս որի, ակնհայտ դրսևորվեց **հայ հոգևորականի՝** հասարակական-քաղաքական և **ազատության պայքարին նվիրված գործիչ** լինելու կարևոր հանգամանքը:

4. Ոգևորված ազատության հասնելու գրավիչ հեռանկարով՝ Խրիմյանը և իր համախոհները հայոց ռոմանտիկ ոգու հերթական կրողներն ու արտահայտիչներն էին: Նրանք հաճախ ցանկալին ընդունելով իրականության փոխարեն, «ինքնախաբվում» էին բացառապես իրենց քաղաքական շահերն հետապնդող մեծ տերությունների խարդավանքների առջև, իսկ վերջում խորը հիասթափություն ապրում: Խրիմյանը կարողացավ **դուրս գալ այդ ինքնախաբեության գրավչությունից**, առաջընթաց կարևոր քայլ կատարեց և հայ իրականության մեջ առաջիններից մեկը՝ **զենքի միջոցով ազատություն նվաճելու կոչ արեց**:

5. Նա առաջին գործիչն էր, որ Գուտենբերգի գյուտը՝ տպագրական մեքենան, օգտագործեց արևմտահայ կիսախավարում, առաջին լույսի ճառագայթը սփռեց այդ տխուր տիրույթում: Օգտագործեց գրավոր և բանավոր բոլոր հնարավոր միջոցները՝ ազգային համախմբման գործը կազմակերպելու,

[28] «Էջմիածին» 1971, թիվ 2:

մեր պատմական **անցյալի ու ներկայի անջատված օղակները կամրջելու և ամրակայելու համար**:

6. Խրիմյանը գործուն մասնակցություն ունեցավ հայ հասարակական կյանքին: Միդիատյան սահմանադրության հեղինակներից Գրիգոր Օտյանի հանձնարարությամբ քրդական ցեղերի կյանքը բարելավելու և քրիստոնյա ժողովուրդների կյանքը անվտանգ դարձնելու միտումով մշակեց «Ծրագիր բարենորոգմանց» նախագիծը:

7. Հայոց Հայրիկը պատկանում է այն **անմահների շարքին**, որոնք կանգ չեն առնում այնտեղ, ուր վրա է հասնում նրանց մահը, այլ շարունակում են ապրել իրենց ծնող ժողովրդի արարումներում և դառնում անմահ: Ու թեև Խրիմյանին և նրա համախոհներին չհաջողվեց նվաճել բաղձալի **ազատությունը**, սակայն նրանք կարողացան այդ **գաղափարը փոխանցել հաջորդ սերունդներին**:

8. Խրիմյանի կյանքն ու **գործունեությունը յուրահատուկ դպրոց դարձան հետագա սերունդների համար: «Երկաթե շերեփի» պատգամով և «իրավունքը ուժի մեջ է» կարգախոսով նա մեր ազգային-ազատագրական պայքարի վեկտորը անվերադարձելիորեն թեքեց դեպի ռազմադաշտ, զենքով ապրելը դարձրեց անխուսափելի կենցաղ**: Իրողություն, որը բազմիցս (նաև հենց մեր օրերում) լուրջ քննություն է բռնում մեր ազգապահպանման գոյապայքարում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրիկ, Պոսթըն, 1957, 299 էջ:

Անանիա, 1906, թիվ 10–11 (Ստեփան Փափազեանի Պատգամաւորի մը յուշատետրը):

Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ (1860–1870 թթ.), Կ.Պոլիս, տպ. Սարեան, 1890, 435 էջ, (1870–1874 թթ.), Կ.Պոլիս, 1870, 1016 էջ, (1874–1876 թթ.), Կ.Պոլիս, տպ. Յ. Միւհէնտիսեան 1874, 535 էջ, (1876–1877 թթ.), Կ.Պոլիս, 1876, 518 էջ, (1878–1880 թթ.), Կ.Պոլիս, 1878, 518 էջ, (1880–1881 թթ.), Կ.Պոլիս, տպագրություն Արամեան, 1880, 610 էջ, (1881–1883 թթ.), Կ.Պոլիս, 1881, 409 էջ, (1883–1884 թթ.), Կ.Պոլիս, 1883, 612 էջ, (1884–1886 թթ.), Կ.Պոլիս, 1884, 479 էջ, (1886–1888 թթ.), Կ.Պոլիս, 1886, 316 էջ, (1888–1890 թթ.), Կ.Պոլիս, 1888, 344 էջ, (1890–1896 թթ.), Կ.Պոլիս, 1890, 152 էջ:

«Արծուի Վասպուրական» ամսագիր, 1855–1864 թթ.:

Գիւզալեան Գ. 1954, Խրիմեան Հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պէյրութ, 65 էջ:

Դարբինեան Ա. 2003, Հայ ազատագրական շարժման օրերէն, յուշէր 1890էն 1940, Երևան, 640 էջ:

Դիւան Հայոց պատմութեան 1915, հ. ԺԳ, Թիֆլիս:

Եկարեան Ա. 1985, Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 255 էջ:

Երամեան Հ. 1929, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 520 էջ:

«Էջմիածին» ամսագիր, թիվ 2, 1971, էջ 3:

Թէրզիպաշեան Ա. 1938, Արծիւն իր բոյնին մէջ, Ա. Տէր-Յակոբեան տպարան, Փարիզ, 246 էջ:

Խան-Ազատ Ռ. 1908, Հիշողութիւններ Խրիմեանի մասին, տպարան Ն. Աղանեանի, Թիֆլիս, 64 էջ:

Խրիմեան Հայրիկ 1992, Երկեր, Երևան, ԵՊՀ հրատ., 447 էջ:

Կոստանդյան Է. 2005, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան:

Կոստանդյան Է. 2008, Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 460 էջ:

Հայոց պատմություն 2010, Հ. III, գիրք առաջին, Երևան, 406 էջ:

Նշկեան Յ. 1884, Առաջին կայծերը: Էջ մը Կարնոյ զարթօնքէն, «Պայքար» տպարան, 146 էջ:

Չոպանեան Ա., Մահկանական, «Մերքյուր դը Ֆրանս», 15 նոյեմբեր, 1907 թ.:

Սարգսյան Ս. 2009, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.), Երևան, 246 էջ:

Տևկանց Ե., Տոհմային յիշատակարաններ, Մատենադարան, ձեռագիր թիվ 4180:

Տէր-Մկրտչեան Ե. 1966, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պայքար տպարան, Պոսթըն, 639 էջ:

Государственный Военно-исторический архив (ЦГВИА), ф. 50 (Турция).

МКРТЫЧ ХРИМЯН
(К 200-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ)

САРГСЯН С.

Резюме

Ключевые слова: Берлинский конгресс, юбилей, программы освобождения, великий воспитатель, вооруженная борьба, революционная деятельность, просветитель.

В этом году исполняется 200-лет со дня рождения известного армянского общественно-политического деятеля, стоявшего у истоков зарождения национально-освободительной идеологии, – Католикоса Всех Армян Мкртыча Хримяна (1893–1907 гг.), посвятившего свою жизнь борьбе за свободу армянского народа.

Великий просветитель старался привлечь внимание западноармянской интеллигенции к армянской провинции, ее насущным проблемам. В борьбе за свободу он особую важность придавал созданию национальной периодики и освободительных организаций. В 1890-х годах М. Хримян

стал основоположником и создателем «провинциальной литературы», автором множества религиозных и художественных произведений.

MKRTICH KHRIMIAN
(IN COMMEMORATION OF HIS 200TH ANNIVERSARY OF BIRTH)

SARGSYAN S.

Summary

Key words: congress of Berlin, anniversary, liberation programs, great educator, armed struggle, revolutionary activity, educator.

The 200th anniversary of birth of the eminent public and political figure, founder of the national-liberation ideology, the author of "the iron ladle" approach, the Catholicos of All Armenians Mkrtich Khrimian (1893–1907) is celebrated this year. M. Khrimian devoted all his life to awaken the Armenians from their century-long apathy, to educate them, consolidating Armenians to fight for the patriotic cause. The great educator drew Western Armenian intellectuals' attention to the Armenian provinces. He became an enlightening figure and leader of the Armenian provinces, highlighting the devastating effects of the emigration, and after the Berlin Congress he came to the conclusion that armed fight was the only means of liberation. In the fight for freedom he prioritized live speech and creation of press and liberation organizations. He was the founder and initiator of the "provincial literature" in the 1890s and penned religious-ideological works, fiction and many other pieces. Armenians hold M. Khrimian's undeniable contribution in high regard and pay homage by attributing "Hayrik" (a diminutive for father) honorific to him, while further generations have learned a lot from his precepts that serve for the benefit of the nation.